

ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄՈՒՄ

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ

ՕԾՎԵՑ ԿՈԹԻ ԳՅՈՒՂԻ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Հուլիսի 13-ին Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Մեայոհ եպիսկոպոս Չուլջյանի հանդիսապետությամբ և ձեռամբ կատարվեց Կոթի գյուղի Սբ. Աստվածածին (1900 թ.) եկեղեցու վերածման արարողությունը: Ձեռամբ Սրբազան հոր և մասնակցությամբ առաջնորդական փոխանորդ Հոգեշնորհ Տեր Սասուն ծայրագույն վարդապետի և թեմի հոգևոր դասի՝ օծվեցին Սբ. Մեղանը, Խորանը, Սկրտության սուրբ ավազանը: Արարողության ավարտին նորած եկեղեցում պատարագ մատուցեց Տեր Սիմեոն քահանա Առաքելյանը:

Գյուղի հավատացյալ ժողովրդի համար այդ օրը նվիրական ու պատմական էր, քանզի 2007թ. այդ նույն օրը Սրբազան հոր ձեռամբ օծվել էր եկեղեցու խաչը: Եկեղեցու օծման արարողության ավարտին Մեայոհ Սրբազանն իր օրհնության ու շնորհավորական խոսքն ուղղեց կոթեցիներին և բոլոր ներկաներին. «Գոհություն ենք հայտնում Բարձրյալն Աստծուն, որ մեր Տիրախնամ թեմում ևս մեկ աղոթքի տուն իր դռները բացեց: Ուստի, սիրելի՛ կոթեցիներ, ձեզ ենք հանձնում հավատքի բանալին՝ այս սուրբ եկեղեցին ու ավետարանը: Այսուհետ ձեր սրտաբուխ աղոթքները, որ կմատուցվեն այս սուրբ տաճարում, թող նվիրվեն մեր Մայր եկեղեցու անսասանության, մեր անկախ հայրենիքի բարգավաճման ու հայ ժողովրդի բարօրության համար»:

Սրբազանը մեծարելով եկեղեցու բարերարներ՝ համագյուղացիներ Սահակ Մերգոյի և Արտեմ Դիմիտրիի Խաչատրյաններին, Գուգարաց թեմի հոգևոր դասի և ժողովրդի անունից իր երախտագիտությունը հայտնեց և հանուն Վեհափառ Հայրապետի օրհնեց ու բարի մաղթանքներ հղեց ի հիշատակ այս պատմական օրվան:

Արարողությանը ներկա էին Տավուշի մարզպետ Արմեն Դուլարյանը, Կոթիի համայնքապետ Ֆելիքս Մելիքյանը, մարզային իշխանությունների ներկայացուցիչներ, համայնքապետեր, բազմաթիվ հյուրեր և համայնքի անդամներ:

Սուրբ Պատարագի ավարտին ներկաներին բաշխվեց երախտիքի ու գոհության մատաղձ գյուղացիների արևատության, հարազատ գյուղի անսասանության և Մայր հայրենիքի ու սուրբ եկեղեցու պայծառության համար:

Գուգարաց թեմի մամլո դիվան